Ըստ Լեոնտեի՝ տուժողը Ադրբեջանն է

Day.Az ինտերնետ կայքը հարցազրույց է արել ռուս հեռուստալրագրող, «Օդնակո» հաղորդաշարի մեկնաբան Միխայիլ Լեոնտեի հետ: «Ինչպիսի՞ն կլինեն ռուս-ադրբեջանական հարաբերությունները Դմիտրի Մեդվեդեւի օրոք» հարցին նա պատասխանել է. «Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ հարաբերություններում նշմարվում են որոշակի օբյեկտիվ եւ սուբյեկտիվ ասպեկտներ: Սուբյեկտիվը ԼՂ հիմնախնդրի չկարգավորվածությունն է: Ընդորում, Ռուսաստանն ունի հատուկ հարաբերություններ Հայաստանի հետ եւ բավականին լավ հարաբերություններ Ադրբեջանի հետ: Սակայն ռուս-ադրբեջանական հարաբերությունները բարելավելու համար անհրաժեշտ են Հեյդար Ալիեւի հնարավորություններն ու տաղանդը: Խնդիրն իրականում լուծելի է միայն պարզ պատճառով՝ այն չի կարող չլուծել: Օրինակ, պաղեստինա-իսրայելական խնդիրը կարելի է եւ չլուծել: Իսկ ահա ադրբեջանահայկական խնդիրը պե՛տք է լուծվի: Դրանում շահագրգռված է ոչ միայն Ադրբեջանը, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես տուժող կողմ, այլ նաեւ Հայաստանը: Ստատուս-քվոյի հետագա պահպանումն անհնարին է Հայաստանն իրականում պարտվում է եւ՛ քաղաքական, եւ՛ տնտեսական առումներով, քանի որ հակամարտությունը գտնվում է միջազգայնորեն կասեցված վիճակում: Եւ որքան երկար տեւի այս վիճակը, այնքան վատ Հայաստանի համար: Նրանից թե ինչպես եւ որտեղից կլուծվի Լեռնային Ղարաբաղի խնդիրը, կախված է ռուս-ադրբեջանական հարաբերությունների արդյունավետությունը: Վաղ թե ուշ Ադրբեջանը ստիպված է լինելու ընտրել: Հուսանենք, որ Ադրբեջանի ընտրությունը կընկնի Կրեմլի վրա»: